# Արձանագրություն N 3

<< ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԹՈՒՂԹ/2022/Հ-62 >> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան **28. 07. 2022թ.**

**Մասնակցում էին՝**

- ՀՀ ոստիկանության ՏՎ նյութական արժեքների հաշվառման և գույքի ապահովման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ս. Սեդրակյան (հանձնաժողովի նախագահ),
- ՀՀ ոստիկանության ՏՎ նյութական արժեքների հաշվառման և գույքի ապահովման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Գ. Մարտիրոսյան (գնահատող անդամ),
- ՀՀ ոստիկանության ՏՎ նյութական արժեքների հաշվառման և գույքի ապահովման բաժնի տեսուչ, ոստիկանության կապիտան Մ. Գասպարյան (գնահատող անդամ),
- ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Հ. Ասատրյան (հանձնաժողովի քարտուղար):

**Օրակարգ՝**

ՀՀ ոստիկանության կարիքների համար **Ա4 ֆորմատի թղթի** ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԹՈՒՂԹ/2022/Հ-62 ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

**1. Տեղեկություն ընթացակարգի շտկված հայտի մասին.**

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԹՈՒՂԹ/2022/Հ-62 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից անբավարար էր գնահատվել ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և հանձնաժողովի թիվ 2 որոշմամբ մասնակցին տրվել էր 1 աշխատանքային օր արձանագրված անհամապատասխանությունները վերացնելու համար: Մասնակցի կողմից շտկումը լիարժեք չի կատարվել, մասնավորապես՝ հավելված 1-ը ամբողջությամբ այլ մրցույթի վերաբերյալ է, իրական շահառուների վերաբերյալ տվյալներ չեն ներկայացվել, հայտը էլեկտրոնային ստորագրված չի, ինչպես նաև բացակայում է առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը:
Վերոնշյալից ելնելով ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման:

**1. Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.**

***Հանձնաժողովը որոշեց՝***

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԹՈՒՂԹ/2022/Հ-62 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ-ի հայտը մերժել, իսկ գնման ընթացակարգը համաձայն «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հայտարարել չկայացած:

Քանի որ ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չշտկելու հանգամանքը ակնհայտ խաթարում է ՀՀ ոստիկանության կարիքների համար անհրաժեշտ Ա4 ֆորմատի թղթի ձեռքբերման բնականոն գործընթացը, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի հիման վրա գնահատող հանձնաժողովը դիմելու է պատվիրատուի ղեկավարին, որպեսզի վերջինիս կողմից որոշման հիման վրա դիմում ներկայացվի լիազորված մարմնին՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ-ին ներառելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

***Հանձնաժողովի նախագահ՝*** Ս. Սեդրակյան

***Հանձնաժողովի անդամներ՝*** Գ. Մարտիրոսյան

Մ. Գասպարյան

***Քարտուղար՝*** Հ. Ասատրյան